

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

### ***Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսարյուչետային բաժնի առաջատար մասնագետ (30-3.2-9)***

#### ***Առաջատար մասնագետը՝***

• կատարում է գյուղատնտեսության զարգացման և սպասարկման (բացառությամբ սերմնաբուծության և բույսերի պաշտպանության բնագավառների) միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի պլանավորումը: Նշված ոլորտի միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանացանկերի կազմումը և դրանց դիմաց ֆինանսավորումը, սպասարկման բնագավառների վերաբերյալ ցուցանիշների հավաքագրում, ամփոփում, վերլուծություն, ուսումնասիրություն, փաստաթղթավորում: Նամակների, հրամանների, որոշումների և այլ փաստաթղթերի նախագծերի կազմում, տեղերին հրահանգավորում, ինչպես նաև կատարում է գյուղատնտեսության զարգացման և սպասարկման (բացառությամբ սերմնաբուծության և բույսերի պաշտպանության բնագավառների) միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման գործի համակարգումը:

• իրականացնում է Բաժնի գործավարության կազմակերպումը և կատարման հսկողությունը:

• մասնակցում է ֆինանսատնտեսական գործունեության կանխատեսումների, դրանց արդյունքների ամփոփման և համապատասխան մարմիններին անհրաժեշտ տեղեկատվության ներկայացման աշխատանքներ:

• Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է Բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր:

• իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

#### ***Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝***

• տեսական տնտեսագիտություն կամ ֆինանսներ և վարկ կամ հաշվապահական հաշվառում և աուդիտ կամ ագրարային արտադրության տնտեսագիտություն և կառավարում կամ ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձագիտություն կամ մաթեմատիկական մեթոդներ և գործառնությունների հետազոտություն տնտեսագիտության մեջ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների

ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

• «Բյուջետային համակարգի մասին», «Գնումների մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

### ***Աշխատավարձի չափը՝ 150.799 (հարյուր հիսուն հազար յոթ հարյուր իննունհինգ) ՀՀ դրամ***

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

***Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:***

### ***Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝***

- գրավոր դիմում,
- անձնագրի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
  - աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).
  - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
    - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

***Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 28.08.2018թ.***